ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

-- ----------ի 2026 թվականի №- -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №518-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի մայիսի 11-ի ՀՕ-228-Ն օրենքի 22-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի պայմանագրի (օֆերտա) օրինակելի ձևը սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №518-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 12-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին ենթակետով.

«1.1) Օրենքով սահմանված էներգիայի պահեստավորման երաշխիք ունեցող Պահեստավորողից (այսուհետ՝ ԵՊ կայան) ձեռք բերել էներգիայի պահեստավորման ծառայություն,».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.1-ին և 14.2-րդ կետերով.

«14.1. ԵՊ կայանն Օրենքի, իր լիցենզիայի՝ լիցենզավորման ենթակա գործունեության դեպքում, Կանոնների և սույն պայմանագրի համաձայն պարտավոր է՝

1) ՀԾՄ-ին մատուցել էներգիայի պահեստավորման ծառայություն՝ Համակարգի օպերատորի կարգավարական հրահանգներին համապատասխան,

2) ապահովել նշված իրավական ակտերով սահմանված այլ պարտականությունների կատարումը:

14.2. ԵՊ կայանն Օրենքի, իր լիցենզիայի՝ լիցենզավորման ենթակա գործունեության դեպքում, Կանոնների և սույն պայմանագրի համաձայն իրավունք ունի՝

1) ՀԾՄ-ից պահանջել վճարել մատուցված էներգիայի պահեստավորման ծառայության դիմաց,

2) իրականացնել նշված իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:».

3) 24-րդ կետի առաջին նախադասությունում «վաճառքն իրականացվում է» բառերից հետո լրացնել «, իսկ պահեստավորման ծառայությունը մատուցվում է» բառերը.

4) 31-րդ կետում «արտադրության» բառից հետո լրացնել « կամ էներգիայի պահեստավորման» բառերը.

5) №1 հավելվածում «Արտադրողների» բառից հետո լրացնել « կամ Պահեստավորողների» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի դեկտեմբերի 4-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- ----------ի 2026թ.